

---

---

**ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԱՐԱԲՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ  
ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԻ ԶԱՆԻ ԴՐՎԱԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Յ. Կ. ԴԱՎԹՅԱՆ**

Միջնադարյան Հայաստանի պատմության վառ ու բովանդակալից էջերից են հայ-արաբական ռազմաքաղաքական առնչակցությունները: Ժամանակաշրջանի վերաբերյալ բավականին հարուստ տեղեկություններ են հաղորդում ինչպես հայկական, այնպես էլ արտաքին աղբյուրները<sup>1</sup>: Ջգալի թիվ են կազմում նաև պատմագիտական ուսումնասիրությունները, որոնցում համակողմանիորեն քննության են առնված խնդրո առարկա նյութի տարբեր հարցեր<sup>2</sup>: Ստորև կփորձենք փոքր-ինչ այլ տեսանկյունից մոտենալ VII-VIII դդ. տեղի ունեցած իրադարձություններին, որոշ հավելումներ կատարել արաբների հայկական արշավանքների մի քանի դրվագների վերաբերյալ ցարդ տրված գնահատականներին:

Նախ՝ Դվինի առաջին ավերումի մասին: Հայտնի է, որ արաբներն առաջին շրջանում Հայաստանի վրա արշավելիս բացառապես ասպատակելու և հետախուզելու նպատակ էին հետապնդում: 640 թ. Վերին Միջագետքը գրավելուց հետո նրանք մտան Տարոն, այնուհետև անցան «Հարք, Բասեն, Վրաստան, Ջավախք և Վանանդ գավառները»<sup>3</sup>, բոլորին հարկատու

---

<sup>1</sup> Տե՛ս **Հովհան Մամիկոնյան**, Տարոնի պատմություն, Եր., 1989, **Սերետս**, Պատմություն, Եր., 2005, **Ղևոնդ**, Պատմություն, Եր., 1982, **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, Եր., 1996, **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն Արծրունյաց Տան, Եր., 1985, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», **Իբն ալ-Ասիր** (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), հ. 11, Եր., 1981, նույն տեղում, **Թեոփանես Խոստովանող** (այսուհետև՝ Թեոփանես Խոստովանող), հ. 13, Եր., 1983:

<sup>2</sup> Տե՛ս **Կ. Արոնց**, Քաղաքական հոսանքներ հին Հայաստանում, Երկեր, հ. Ա, Եր., 2006, **Լեո**, Երկերի ժողովածու, հ. II, Եր., 1967, **Հ. Մանանդյան**, Արաբական արշավանքները Հայաստանում, Երկեր, հ. Բ, Եր., 1978, **Բ. Առաքելյան**, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար, Եր., 1940, **Հ. Հարությունյան**, Հայաստանն արաբական խալիֆայի տիրապետության ժամանակ, Եր., 1946, **Ս. Մելիք-Բախչյան**, Հայաստանը VII-IX դարերում, Եր., 1968, **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., 1965, **А. Тер-Гевондян**, Армения и арабский халифат. Ер., 1977, **Э. Даниелян**, Из истории армяно-арабских отношений. «Византийское наследство», № 2, Ер., 2002, **Ա. Եղիազարյան**, Արմինիա ոստիկանության սահմանները, ՊԲՀ, № 1, 2005, **Է. Գանիելյան**, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Եր., 2000, **А. Шагинян**, Первые нашествия арабов на Армению и ответные походы армяно-византийских отрядов (некоторые хронологические уточнения).- ИФЖ, № 2, 2007:

<sup>3</sup> **Հովհան Մամիկոնյան**, նշվ. աշխ., էջ 114:

դարձրին, ապա վերադարձան Արաբիա: Գվինի առումի մասին հայկական և արաբական աղբյուրներում եղած հիմնականում նկարագրական, երբեմն նաև հակասական տեղեկությունները քննության ենթարկելով՝ Հ. Մանանդյանը հավաստում է, որ դա կատարվել է հենց սույն արշավանքի ժամանակ՝ 640 թ. հոկտեմբերի 6-ին<sup>4</sup>: Ըստ այդմ, Գվին հասածը վերը նշվածից առանձին մի գորախումբ էր, որը Բերկրիի ձորով անցել էր Կոզովիտ, ապա խուժել Այրարատ<sup>5</sup>: Հայ հեղինակների վկայությամբ, արաբները պահապան գործի բացակայության պատճառով հեշտությամբ գրավում են քաղաքը, կողոպտում ու բնակիչներից շատերին սրի քաշում, իսկ 35 հազար մարդու էլ գերեվարում են:

Ինքնին ողբալի այս իրադարձության մեջ, սակայն, մեզ համար առավել ուշագրավը հարձակվողների ցուցաբերած անսպասելի դաժանությունն է: Բանն այն է, որ կատարվածը ոչ մի առումով չի համապատասխանում պատերազմական այն օրենքներին, որոնք արաբների համար սահմանել էր Մուհամմեդ մարգարեն: Դրանցից մեկը ջիհադի՝ ոչ մահմեդականների դեմ մղվող սրբազան պատերազմի մասին օրենքն է: Լեոն գրում է, որ, համաձայն այդ օրենքի, «պատերազմական գործողություններ սկսելուց առաջ քյաֆիրներին (անհավատ, անաստված, սրանից է ծագել գյավուր բառը.- Հ.Ղ.) առաջարկվում է կամ ընդունել իսլամը, կամ գլխահարկ (ջիզիե) տալ: Եթե նրանք հոժար կամքով ընդունում են գլխահարկ տալը, այն ժամանակ հարձակում չի լինում, և անհավատներն օրենքի պաշտպանության տակ են առնվում: Իսկ եթե մերժում են երկու առաջարկություններն էլ, այն ժամանակ սկսվում է պատերազմը... Սակայն առհասարակ կարգ է, որ (գրաված քաղաքում.- Հ.Ղ.) չի կարելի կոտորել կանանց, երեխաներին, ծերերին, հաշմանդամներին, կույրերին, խելագարներին, տկարներին, աշխարհի կյանքից հեռացած կրոնավորներին»<sup>6</sup>: Տվյալ դեպքում այդ օրենքն ու կարգը չգործեցին, իսկ թե ինչու, հայկական աղբյուրները բացատրություն չեն տալիս: Բայց Ղևոնդը հստակ ասում է, որ արաբները «քաղաքը պատերազմելու ընդունակ այրերից թափուր գտան, քանզի ամենքը Թեոդորոս իշխանի հետ զնացել էին, և միայն կանայք, մանուկներ և այլ խառնիճադանջ [բազմություն] կար, որի մեջ պատերազմելու ընդունակ այրեր չկային: Հասան քաղաք, անմիջապես գրավեցին ամբողջ և այնտեղ գտնվող տղամարդկանց կոտորեցին, իսկ կանանց ու մանուկներին՝ երեսունհինգ հազար հոգի, գերեվարեցին»<sup>7</sup>:

Արաբական գործի գործադրած վայրագությունն անտրամաբանական է նաև մեկ այլ առումով: Ինչպես հայտնի է, Մուհամմեդի պատվիրաններից մեկն էլ այն էր, որ «սուրբ գիր ունեցող մարդիկ»՝ հրեաներն ու քրիստոնյաները, հպատակվելով և տուրք վճարելով, կարող էին հավատարիմ մնալ իրենց կրոնին<sup>8</sup>: Օրենքը գործում էր նույնիսկ դիմադրություն ցույց

<sup>4</sup> Տե՛ս Հ. Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում, հ. Բ, էջ 522:

<sup>5</sup> Տե՛ս Սեբեոս, Պատմություն, էջ 205:

<sup>6</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. II, էջ 276:

<sup>7</sup> Ղևոնդ, Պատմություն, էջ 22:

<sup>8</sup> Տե՛ս A. Массэ, Ислам, М., 1982, էջ 55:

տված քաղաքների համար: Օրինակ՝ 637 թվականին երկու տարի պաշարման ենթարկված երուսաղեմցիների անձնատուր լինելու պայմանների վերաբերյալ անձամբ Օմար խալիֆի հետ բանակցություններ է վարում հույների պատրիարք Սոփրոնիոսը: Նրան վստահեցնում են, որ առաջին հերթին բնակչության հետագա անվտանգությունը կերաշխավորվի<sup>9</sup>: Պայմանագրի հիման վրա քաղաք հանձնելու բազմաթիվ օրինակներ է բերում նաև արաբ հեղինակ Իբն ալ-Ասիրը<sup>10</sup>: Սակայն այս դեպքում ևս Դվինում նման բան տեղի չունեցավ. ինչո՞ւ: Ի վերջո երկու պայմաններն էլ առկա էին, որ բնակչության կոտորած չլիներ. մեկը, որ նրանք անգե՛ն ու անպաշտպան էին, և մյուսը, որ այնտեղ էր գտնվում կաթողիկոսարանը՝ բազմաթիվ հոգևորականներով հանդերձ: Այս երկուսին ավելացնենք նաև եկեղեցական անբավ զանձերը, որոնց թեկուզ մի մասը նվիրաբերելով՝ կարելի էր փրկել մարդկանց: Ուրեմն ի՞նչն էր պատճառը...

Սերեոսը պատմում է, որ արաբները «անցնելով Մեծամորի կամրջով՝ ասպատակեցին ողջ երկիրը և ժողովելով հույժ բազում ավարն ու գերիներին՝ եկան բանակեցին Խոսրովակերտ անտառի եզրին: Եվ եղավ՝ հինգերորդ օրը դիմեցին քաղաքի վրա: *Քաղաքը մատնվեց նրանց ձեռքը* (ընդգծ. մերն է. - Հ. Գ.), քանզի շուրջբոլորը ծուխ արձակեցին, ծխով ու նետաձգությամբ քշեցին պարսպի պահապաններին, սանդուղքներ կանգնեցնելով՝ ելան պարսպի վրա և ներս խուժելով՝ բացեցին քաղաքի դարպասը: Թշնամիների զորքերը ներս խուժելով՝ քաղաքի բազմությանը կոտորեցին սրով և առնելով քաղաքի ավարն ու կողոպուտը՝ ելան ու բանակեցին նույն բանակատեղում»<sup>11</sup>: Այն բոլոր հարցերը, որոնց վրա կամենում ենք ուշադրություն հրավիրել, արտահայտված են այս փոքրիկ հատվածում: Հանելուկ է մնում՝ քաղաքը պաշտպաններ ունե՞ր, թե՞ ոչ, արաբները նախօրոք դվինցիներից պահանջներ առաջադրեցի՞ն, թե՞ ոչ, և, ամենակարևորը, քաղաքը գրավվե՞ց, թե՞ հանձնվեց թշնամուն (Սերեոսն ասում է՝ մատնվեց նրանց ձեռքը, Դևոնդն ասում է՝ անմիջապես գրավեցին): «Մատնել» բառի գլխավոր իմաստն է դավաճանությամբ թշնամու ձեռքը տալ, ուրիշի ձեռքը հանձնել: Մի՞թե Սերեոսը՝ դեպքերի ժամանակակիցը, ոչ թե փոխաբերաբար, այլ ուղղակի իմաստով է գրել, որ քաղաքը հանձնվեց արաբներին: Այդ դեպքում, ովքե՞ր կարող էին լինել հանձնողները:

Ուսումնասիրողները մի հարցում համամիտ են. արաբական սրընթաց նվաճումները պայմանավորված էին նաև գրավված երկրների բնակչության բարեհաճ վերաբերմունքով: Հայտնի է, որ հրեաները, միաբնակ քրիստոնյաներն ու սիրիացի նեստորականները նրանց ազատարարների պես էին ընդունում<sup>12</sup>: Լեոն էլ է ուշադրություն դարձրել այս հանգամանքին: Նա գրում է. «Հրեաներն իրենց կրած հալածանքների վրեժն էին հանում, ընդարձակ չափերով աջակցություն ցույց տալով արաբներին: Սիրիայի նեստորական քրիստոնյաները գտնում էին, որ արաբական տիրապետության տակ իրենք ավելի կրոնական ազատություն կվայելեին»<sup>13</sup>: Հրեաներն

<sup>9</sup> Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 282:

<sup>10</sup> Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 43-44:

<sup>11</sup> **Սերեոս**, նշվ. աշխ., էջ 205-207:

<sup>12</sup> Տե՛ս **A. Maccə**, նշվ. աշխ., էջ 53:

<sup>13</sup> **Լեո**, նշվ. աշխ., էջ 281:

անմիջապես դաշնակցում էին բոլոր նրանց հետ, ովքեր պատերազմում էին Հռոմի, այնուհետև Բյուզանդիայի դեմ՝ ընթացքում կրոնական մոլեռանդությամբ հենց իրենք էլ ոչնչացնելով կամ առնվազն հնարավորինս մեծ վնաս հասցնելով քրիստոնյաներին: Յնցող է Թեոփանես Խոստովանողի հաղորդածը 614 թ. Երուսաղեմի գրավման մանրամասների մասին: Նա գրում է. «Այդ տարին պարսիկները պատերազմով գրավեցին Հորդանանը, Պաղեստինը և սուրբ քաղաքը, որի բնակիչներից շատերին, ինչպես ասում են ոմանք, ինն բյուր հոգու, հրեաների ձեռքով կոտորեցին: *Հրեաները յուրաքանչյուրն իր կարողության համեմատ քրիստոնյաներ էին գնում և նրանց սպանում* (ընդգծ. մերն է.- Հ. Դ.): [Իսկ պարսիկները] իրենց հերթին Երուսաղեմի Չաքարիա պատրիարքին, [Զրիստոսի] պատվական ու կենարար խաչափայտը, բազում գերիների տարան Պարսկաստան»<sup>14</sup>: Նկատենք՝ գերի տանողները նվաճող պարսիկներն էին, կոտորած անողները՝ հրեաները: Ասենք նաև, որ դա ատելության վայրկենական պոռթկում չէր, այլ մեթոդ, ոչնչացումն իբրև պայքարի ձև քրիստոնեության դեմ: Սեբեոսն էլ այդօրինակ մի հիշատակություն ունի: Նույնիսկ գլուխ է վերնագրել՝ «Հրեաների և նրանց չար մտադրությունների մասին»: Նա գրում է, որ այս մի անգամ էլ արաբ իշխանի մոտ սուտ մեղադրանք ներկայացնելով էին հրեաները փորձում նորից սրի մատնել քրիստոնյաներին. «Եվ իսկույն գործի գցելով իրենց չար մտադրությունը՝ կամեցան Երուսաղեմը ծայրեիծայր լցնել արյամբ, ջնջել Երուսաղեմից բոլոր քրիստոնյաներին»<sup>15</sup>:

Դվինն ու Երուսաղեմը ավերելու պատմությունների միջև մի հետաքրքրական ընդհանրություն ևս կա. ըստ Սեբեոսի՝ երկու դեպքում էլ ճշտիվ համընկնում է գերեվարվածների թիվը՝ 35 հազար մարդ<sup>16</sup>: Նույն թիվն է բերում նաև Գևորգի<sup>17</sup>: Հետո նրանց կրկնում են միայն հայ պատմիչները՝ Ասողիկը, Կաղանկատվացին, Սամուել Անեցին, իսկ ահա օտարազգի հեղինակների մոտ գերեվարության մասին որևէ հիշատակություն չենք տեսնում: Պատահականությո՞ւն է արդյոք սա, թե՞ կրկին սրբախոսության օրինակի ենք հանդիպում: Կռահելու բանալին կարծես հենց Գևորգի մոտ էլ կարող ենք գտնել: Նա Դվինին նվիրված իր ողբն սկսում է «Սուրբ եկեղեցիները, ուր հեթանոսները չպետք է մտնեին, քանդված ու քայքայված, անօրենների ոտից կոխան էին դարձել»<sup>18</sup> նախադասությամբ և ավարտում հեթանոսների կողմից Երուսաղեմը պղծելու առիթով Դավիթ մարգարեի ողբասացությունից մի հատված բերելով<sup>19</sup>: Վերջում իր կողմից ավելացնում է. «Այս ամեն պատուհասային անցքերը, որոնք այն ժամանակ Հրեաստանում էին եղել, այժմ մեզ մոտ կատարվեցին՝ մեծ տազնապ պատճառելով»<sup>20</sup>: Նորից ամեն ինչը սուրբգրային պատմություններին նմանեցնելու ձգտում. նույն աղետներն ու երևույթներն անպատճառ պիտի կրկնվեին Հայաստանում: Ողբը հիշյալ

<sup>14</sup> Թեոփանես Խոստովանող, էջ 15:

<sup>15</sup> Սեբեոս, նշվ. աշխ., էջ 209:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 155 և 207:

<sup>17</sup> Տե՛ս Գևորգ, նշվ. աշխ., էջ 22:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Տե՛ս Աստուածաշունչ, Սաղմոս 78, 1-3:

<sup>20</sup> Գևորգ, նշվ. աշխ., էջ 23:

դարերում որպես գրական ժանր սկսում է նոր զարգացում ապրել, և հայ մատենագրության մեջ կարծես թե Գվինի մասին լավան ասքն առաջինն է, որից հետագայում պիտի դիմառնության եղանակով անձնավորված քաղաքների բերանով պատմած աղետների շարք գոյանա, իսկ Դևոնդից շուրջ 400 տարի հետո Ներսես Շնորհալիս գրի այդ ժանրի ամենակատարյալ օրինակը՝ «Ողբ Եդեսիոյ» պոեմը:

Գերեվարության ու գերիների թվի հետ կապված մեր այս նկատառումների շարադրանքն ավարտել էինք, երբ ծանոթացանք երիտասարդ պատմաբան Ա. Շահինյանի շահեկան հոդվածին, որտեղ նա հետևյալ ուշագրավ դիտողությունն է անում. «Հագարացիների (արաբների) զորաջոկատի թվաքանակը, որը հանդիպում ենք Հովհան Մամիկոնյանի մոտ (18 հազար), հուշում է, որ նրանք չէին կարող իրենց թույլ տալ գերեվարելու 2 անգամ ավելի շատ ժողովուրդ (35 հազար): Հետևաբար, Մերեոսի երկում գերիների թիվն ակնհայտորեն մի քանի անգամ ուռճացված է»<sup>21</sup>: Ավելացնենք՝ ուռճացված է միտումնավոր, ողբը նախապատրաստելու համար...

Ինչ վերաբերում է հայ բնակչության կոտորածին հրեաների ու ասորիների այս կամ այն կերպ մասնակցելուն, նշենք, որ եթե հրեաների դեպքում ինչ-ինչ բաներ կարելի է տրամաբանված համարել, ապա նեստորականների պարագայում անմիջապես դժվար է հասկանալ, թե նրանք ինչ ունեին հայերի դեմ. չէ՞ որ, ի տարբերություն հրեաների, սրանք գոնե քրիստոսասեր էին: Կարծում ենք՝ այս հարցում պետք է նկատի ունենալ վրեժխնդիր լինելու, հայերի պատճառով իրենց կրած բարոյական և նյութական վնասների դիմաց ինչ-որ ձևով փոխհատուցում ստանալու ցանկությունը: Հիշենք ընդամենը, որ նեստորականների բարոզական գործը Հայաստանում տապալվել էր. Գվինի ժողովներում նրանք անընդհատ դատապարտվում էին Հայաստանյայց եկեղեցու կողմից, Պարսից ժողովում կորցրեցին ունեցած բարձր դիրքն ու բացառիկ արտոնությունները Սասանյանների թագավորությունում՝ տեղը զիջելով հայերին և, վերջապես, դեպքերից մի քանի տարի առաջ Կարինի ժողովում նույն հայերը միացան իրենց գլխավոր ընդդիմախոսին՝ բյուզանդական եկեղեցուն: Այսպիսով, հայերը հրեաների համար քրիստոնյա էին, հետևաբար՝ անկախ ամեն ինչից ենթակա էին հալածանքների, նեստորականների համար հերձվածող ու աղանդ էին, այդ պատճառով պիտի ոչնչանային, իսկ արաբների համար հեթանոսներից չէին տարբերվում, այսինքն՝ ոչ սուրբգրային ժողովուրդ էին, քանզի հրեաները նրանց դեմ ամենուր պայքարում էին, իրենց ծանոթ քրիստոնյաները՝ նեստորականներն էլ մերժում ու ժխտում էին: Վերջիններս համարում էին, որ ոչ թե ամեն դավանանքի քրիստոնյաներին, այլ միայն իրենց է արտոնություններ տրված: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ, իսկապես, «սուրբ գրի» մարդկանց որոշ իրավունքներ նախատեսող հանրահայտ պայմանագիրը Մուհամմեդ մարգարեն կնքել է Նաջրան քաղաքի հենց նեստորական համայնքի հետ<sup>22</sup>:

<sup>21</sup> **А. Шагинян**, նշվ. աշխ., էջ 226:

<sup>22</sup> Տե՛ս **Г. фон Грюнебаум**, Классический ислам. Очерк истории (600-1258), М., 1986, էջ 45:

Գլինին բախտակիցներ որոնելիս կարող ենք հիշատակել Պարսկաստանի Ֆարս նահանգի մայրաքաղաք Ստահրի կոտորածների նկարագրությունը, քանի որ 649-ին արաբներն այդ քաղաքը գրավելուց հետո նույնպես ավերում են, սպանում շուրջ 40 հազար տղամարդու, իսկ նրանց կանանց ու երեխաներին գերի տանում<sup>23</sup>: Սակայն դեպքերի այս արտաքին նմանությունը նորից անուղղակիորեն հաստատում է վերոբերյալ միտքը, այն, որ հեթանոսներին կարելի էր ոչնչացնել: Չէ՞ որ արաբների համար գրադատական պարսիկները հեթանոսներ էին, և նրանց, ոչ նեստորական քրիստոնյաների ու հրեաների իրավունքները դեռ հավասարեցված չէին<sup>24</sup>:

Ինչպես տեսնում ենք, ոչ մի արգելք չկար Գլինի հայ բնակչությունը կոտորելու համար. հայերն ուղղադավան չէին ո՛չ արաբների, ո՛չ հրեաների, ո՛չ նեստորականների համար: Նրանք միայնակ էին նույնիսկ իրենց մայրաքաղաք Գլինում, որտեղ, ինչպես Հայաստանի մյուս խոշոր քաղաքներում, հրեական սովոր համայնք կար, ինչպես նաև զգալի թիվ էին կազմում նեստորականները: Ներսես Բ. Բագրևանդցի կաթողիկոսն իր թղթերից մեկում հիշատակում է, որ վաճառաշահության պատճառով ասորի և հրեա առևտրականները եկան, բնակվեցին մեր աշխարհում<sup>25</sup>: Խոսքն, անշուշտ, VI դարում տեղի ունեցած զանգվածային բնակության մասին է, քանի որ նրանք ավելի վաղ ժամանակներից էին հաստատվել Հայաստանում: Փաստերի համադրումից ակամայից ենթադրություն է ծագում, թե արդյոք այս դեպքում էլ նրանք արաբներին նույն ծառայությունը չմատուցեցի՞ն, ինչ Սիրիայում, Պաղեստինում և Եգիպտոսում էին արել: Նկատի ունենք այն, որ նրանք կան քաղաքի դռներն էին բացում հակառակորդի առջև, կան, ինչպես նշեցինք, հենց իրենք էին կոտորում տեղի քրիստոնյաներին: Ուշադրություն դարձնենք մեկ ուրիշ մանրամասնության վրա ևս. ո՛չ Սեբեոսը, ո՛չ Գևորգը ոչ մի հիշատակություն չունեն Գլինում այլազգիների սպանվելու մասին (օրինակ՝ Բուզանդը գրում է պարսիկների կողմից գերի քշված հրեաների մասին<sup>26</sup>):

Գլինի առաջին առումը հետազոտության նյութ չի դարձել՝ չնայած այստեղ առկա բազմաթիվ հետաքրքրական հարցադրումներին, հատկապես երբ համեմատում ես առաջին և երկրորդ գրավումների մանրամասները: Ահավասիկ. արաբ հեղինակները վկայություններ են բերում, որ 652/653թ. զորավար Հաբիբ իբն Մասլաման (Մեսլեմե) Սիրիայի կառավարիչ Մուավիայի հանձնարարությամբ արշավում է Հայաստան: Բելագորի մատենագիրը պատմում է, որ վերջինս եկավ «բանակեցավ Գլինի դատում, ուղարկելով հեծելազորը քաղաքի վերա. ինքն ևս կամաց-կամաց առաջ գնաց, մինչև որ քաղաքի դռների առջև կանգ առավ: Բնակիչք կպաշտպանվեին, նետահարելով նորա զորքը: Հաբիբ դնել տվեց մանջալիք և սկսեց քարկոծել նոցա, մինչև որ նոքա խնդրեցին խնայել նոցա և պարզևել խաղաղություն: Հաբիբ համաձայնեցավ»<sup>27</sup>: Նույնը կրկնում է և

<sup>23</sup> Տե՛ս «История Ирана», М., 1977, էջ 124:

<sup>24</sup> Տե՛ս Գ. фон Грюнебаум, նշվ. աշխ., էջ 72:

<sup>25</sup> Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 70:

<sup>26</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1987, էջ 267:

<sup>27</sup> Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 515:

XIII դարի պատմիչ Իբն ալ-Ասիրը<sup>28</sup>: Լեոն մեջբերում է այդ գրավոր համաձայնությունը: «Դ-վինին շնորհված պայմանագիրը,- գրում է նա,- հետևյալ բովանդակությունն ունեւ: «Հանուն Աստուծո գթածին և ողորմածին, այս է գիրն, որ Հաբիբ որդի Մեսլեմեի շնորհեց Դեբիլի (իմա՝ արաբ. Դ-վին.- Հ. Դ.) քրիստոնյաներին, մոզերին (գրադաշտականներին) և հրեաներին, թե ներկաներին, և թե բացականերին: Չեր անձինքների, ինչքի, եկեղեցիների, տաճարների և ձեր քաղաքի պարիսպների ապահովությունը ձեզ շնորհեցի, և դուք ապահովված եք, և մենք այս դաշնադրությունը հաստատ պիտի պահենք, քանի որ դուք հաճություն հայտնեցիք և խոստացաք գլխահարկ և կալվածատուրք վճարել: Աստված վկա է և իր վկայությունը բավական է: Հաբիբ Մեսլեմեի որդի իր ձեռքով կնքեց այս դաշնագիրը»<sup>29</sup>:

Տարբերությունը բոլոր առումներով ակներև է: Այս մի գրավման ժամանակ արաբներն իրենք իրենց հարազատ էին մնացել, բայց առաջինի դեպքում նույնը չես ասի: Հնարավոր է՝ Դ-վինի առաջին առումը ակցիա էր, բյուզանդահայատակների մեջ սարսափ տարածելու նպատակով իրականացված ահաբեկչական գործողություն, հնարավոր է՝ քաղաքը հանձնողներին էր տրվել ի տրիտուր, հնարավոր է՝ մեր վարդապետ մատենագիրների համար առիթ էր հերթական անգամ Տիրոջ բարկությանը վախեցնելու հավատացյալ ժողովրդին: Ինչ որ է, այսօր այս բոլորը նույնքան դժվար է պնդել, որքան որ հեշտ էր հիշյալ դարերում արդարացնել որևէ քաղաքի ավերումը: Նույն Դ-վինի օրինակը բերենք. 624 թ. Հերակլը Խոսրովի վրա արշավելիս հրնթացս գրավում է Դ-վինը, թալանում ու կրակի տալիս այն: Կայսեր կատարած քայլն այնքան անհեթեթ էր, որ դեպքերին ժամանակակից բյուզանդական բանաստեղծ «Գեորգ Պիսիդասին իր «Հերակլիաս» պոեմում, ջանալով արդարացնել Հերակլիոսին՝ քրիստոնեական քաղաք ավերելու համար նշում է, որ ավելի լավ է բարեպաշտ կայսեր կողմից կործանվի մի քրիստոնեական քաղաք, քան թե անվնաս մնա ամբարիշտ Խոսրովի ձեռքում»<sup>30</sup>: Ի դեպ, Հերակլի տված վնասը, որը պակաս չէր արաբների ավերածություններից, հայ վկայաբանների համար ողբի նյութ չդարձավ...

Արաբների երկրորդ արշավանքը, որը Ղևոնդը համարում է առաջինը, 643թ. կատարվում է Պարսկաստանի կողմից՝ այս անգամ ավերվում են Գողթն գավառը և Նախճավան դաստակերտը<sup>31</sup>: Մերեռը՝ միակ ժամանակակից հայ պատմագիրը, ողբում է ցավից. «Ո՞վ կկարողանա պատմել սարսափելի աղետները Իսմայելի ելուզակի»<sup>32</sup>: Եվ սա պատկերավոր խոսք չէ. արաբներն իրենց անողորքությամբ գերազանցում էին բյուզանդացիներին ու պարսիկներին: Կրկին հարց է ծագում՝ ինչո՞ւ: Ըստ ֆրանսիացի պատմաբան Ժակ դը Մորգանի՝ վերջիններս «այնուամենայնիվ մի քիչ հարզանք ունեին հայերի հանդեպ, որոնք պատերազմների մեջ փոխնիփոխ իրենց հպատակները կամ դաշնակիցներն էին, մինչդեռ անապատի զավակները ոչ մի

<sup>28</sup> Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 55:

<sup>29</sup> Լեոն, նշվ. աշխ., էջ 309:

<sup>30</sup> Թեոփանես Խոստովանող, նշվ. աշխ., ծանոթ. 144, էջ 232:

<sup>31</sup> Տե՛ս Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 20:

<sup>32</sup> Մերեռս, նշվ. աշխ., էջ 213:

հարգանք ցույց չէին տալիս իրենց կրոնը մերժող անհավատներին»<sup>33</sup>: Թերևս սա կարելի է ավելի շատ մասնավոր կարծիք համարել, իսկ եթե ավելի խիստ լինենք, ապա թվում է, թե հեղինակը պարզապես ծանոթ չէ իսլամի օրենքներին: Սակայն դա չէ կարևորը, այլ հարգանքի մասին հեղինակի հիշատակումը, և հենց դրա համար էլ կատարեցինք այս մեջբերումը: Հարգանքի բացակայություն կամ առկայություն՝ պայման, որն իբրև չափանիշ ու կշիռ, իբրև ճակատագրի նախանշում՝ միշտ դերակատար է եղել մեր ժողովրդի կյանքում:

Մորզանի սույն պնդումը, թե արաբներն իրենց կրոնը մերժող անհավատների, մասնավորապես հայերի հանդեպ ոչ մի հարգանք չէին ցուցաբերում, եթե քննենք իբրև անողորմության դրսևորում, ապա պետք է ենթադրել, որ դրա համար հիմք կարող են ծառայել երկու դեպք՝ Դվինի կոտորածը (640թ.) և Նախճավանի ու Խրամի եկեղեցիներում հայ նախարարների ողջակիզումը (705թ.): Նշենք, որ հայ պատմագիտության մեջ բավականին ընդհանուր մոտեցում է ցուցաբերվել այդ իրադարձություններին: Առաջինի առումով, ինչպես ասացինք, ուսումնասիրության նյութ չի դարձել բազմազգ բնակչություն ունեցող քաղաքը գրավելու բոլոր հանգամանքները, իսկ երկրորդի դեպքում ակնհայտ է աչառու մոտեցումը, կողմնակալ մեկնաբանությունը: Վերջինս առավել վտանգավոր ու վնասաբեր ենք համարում, որովհետև դաստիարակչական առումով խեղճությունն ու նվաստությունը աներկբայորեն բացասական ազդեցություն են թողնում սերունդների վրա: Հարցի վրա փոքր-ինչ հանգամանորեն կանգ առնենք:

Ըստ հայ պատմագիրների (Գևորգի<sup>34</sup>, Հովհաննես Գրասխանակերտցի<sup>35</sup>, Մովսես Կաղանկատվացի<sup>36</sup>), արաբ Կասիմ զորավարը ռոճիկ բաժանելու պատրվակով իր մոտ է հրավիրում հայոց նախարարներին, այնուհետև նետում է նրանց Նախճավանի և Խրամի եկեղեցիներն ու հրկիզում: Նույնն է ասում նաև բյուզանդացի ժամանակագիր Թեոփանեսը, թե ինչպես արաբ զորավարը «հայոց մեծամեծերին մի տեղ հավաքելով, ողջակեզ արեց»<sup>37</sup>: Այսինքն՝ պատմական այս վկայությունը փաստ է: Այլ բան է, թե դա ինչպես է ներկայացվում և ինչպես է մեկնաբանվում: Կատարվածի հավաստիությունից առավել վիրավորական է հեղինակների պատմելաոճը: Երբ կարդում ես, թե ինչպես են նախարարներին ու հեծյալներին «հավաքում», «նետում», «զցում», «լցնում», «մտցնում» եկեղեցիները, հարց է առաջանում. ինչպե՞ս, չե՞ որ նրանք հայոց հռչակավոր այրուձիհի հեծյալներ ու հրամանատարներ էին, 1200 հոգի, այսինքն՝ մի լավ գունդ. ինչո՞ւ էին այդպես հեզացել:

Գևորգի այսպես է նկարագրում պատահարը. արաբական զորքերի գրվավոր հրամանատար «Մահմետը կարգադրեց ոմն Կասիմի, որը հրամա-

<sup>33</sup> Վ. Իսկանյան, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VI դդ., Եր., 1991, էջ 480:

<sup>34</sup> Տե՛ս Գևորգի, նշվ. աշխ., էջ 38:

<sup>35</sup> Տե՛ս Հովհաննես Գրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 101:

<sup>36</sup> Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 249:

<sup>37</sup> Թեոփանես Խոստովանող, էջ 84:



նատար էր Նախճավան քաղաքի կողմերում, իր մոտ կանչել Հայաստանի նախարարներին, իրենց հեծյալներով մեկտեղ, պատճառաբանելով, թե իբր արքունի մարդահամարից պետք է անցնեին, հռոգ (ռոճիկ.- Հ.Դ.) ստանալին և վերադառնային: Իսկ նրանք, սովորական պարզամտությամբ, հավատալով գաղտնի դավող-որսողների նենգությանը, անմիջապես այնտեղ ժամանեցին: Երբ հավաքվեցին, նա հրամայեց նրանց երկուսի բաժանել. *ոմանց հավաքեցին Նախճավանի եկեղեցում, իսկ մյուս կեսը ուղարկեցին Խրամ ավանը և նրա եկեղեցին նետելով՝ նրանց վրա պահապաններ կարգեցին և խորհում էին, թե ինչպես ոչնչացնեն նրանց* (ընդգծ. մերն է.- Հ.Դ.): Բողոքին հավաքելով, ազատատոհմ մարդկանց դուրս բերեցին արգելարանից, իսկ նրանց, որ սրբարանում արգելափակված էին, հրկիզեցին ու տոչորեցին աստվածային խորանի կամարների տակ: Գտնվելով նման դաժան սպառնալիքի առջև և տեսնելով, թե ամեն կողմից զրկված են մարդկային օգնությունից, ձերբակալվածներն ապավինեցին բոլորի Աստծուն և միայն նրան էին օգնության կանչում»<sup>38</sup>:

Դեպքի մասին բոլորովին այլ վկայություն է պահպանել X դարի արաբ պատմիչ Քուֆին: Նա գրում է, որ Կասիմ գորավարը հայերին առաջարկում է ձեռք բերած նոր պայմանավորվածությունները վավերացնել՝ հավատարմության երդումը կարդալով եկեղեցիներում համախմբված: «Սակայն,- շարունակում է նա,- երբ իմացավ, որ *բողոքը հավաքվել են եկեղեցիներում, դռները նրանց վրա փակել տվեց* (ընդգծ. մերն է.- Հ.Դ.) և ներսում եղածների հետ միասին նավթի կրակով վառեցին»<sup>39</sup>: Նշենք, որ արաբներին երդման խոսք տալը կամ նրանցից վերցնելն այդ ժամանակ սովորական երևույթ էին: Օրինակ՝ ընդամենը մի քանի տարի առաջ խալիֆայի եղբայր նույն Մուհամմադ գորավարը (Ղևոնդի մոտ՝ Մահմետ) անձամբ հայերին գրավոր երդման թուղթ էր տվել՝ երաշխավորելով նրանց կյանքը, ունեցվածքն ու դավանանքի ազատությունը<sup>40</sup>: Հետևաբար՝ Նախճավանում նախարարները չէին կարող միանգամից կռահել արաբների նենգ մտադրությունը, և նրանք իսկապես ինքնակամ խմբվեցին եկեղեցիներում: Անշուշտ, առանց զենքի, քանզի կարգն էր այդպես: Ամեն ինչ բացահայտվեց, երբ նրանց հետևից փակվեցին դռները: Այսպիսով, արաբները ոչ թե եկած հայ իշխաններին մեկտեղ հավաքեցին, զինաթափեցին ու բռնի լցրեցին եկեղեցիները, այլ սիրաշահելով նրանց հրավիրեցին Նախճավան, պայմանագրով նաև ռոճիկների նոր չափեր սահմանեցին, ապա առաջարկեցին փոխադարձ հավաստիացումները հաստատել հավուր պատշաճի՝ արարողությամբ: Սակայն, միտք ունենալով վրեժխնդիր լինել հայերից, արաբները չխորշեցին ստոր քայլերից:

Ակնհայտ տարբերություն կա այս երկու մեկնաբանությունների միջև: Եվ քանի որ սերունդները դաստիարակվում ու ոգևորվում են նաև պատմական օրինակներով, ապա, ուրեմն, «Կրակի տարվա» (պատմության մեջ այս անունով է հայտնի 705 թվականը) մասին պետք է գրվի այնպես, որ հայ ընթերցողն իրեն ճնշված ու ընկճված չզգա, քանզի, իսկապես, կատարվածի

<sup>38</sup> Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 38-39:

<sup>39</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, Եր., 1984, էջ 329:

<sup>40</sup> Տե՛ս Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 37:

մեջ հայ մարդու համար վիրավորական ու անոթալի ոչինչ չկա: Այս պատմության մեջ պարզապես ցայտուն ընդգծվում է հայերի դյուրահավատությունն ու անշրջահայացությունը: Հարց է առաջանում. իսկ ինչպե՞ս է, որ արաբ պատմիչի խոսքն ավելի ճշմարտաման է, քան հայ պատմիչներինը: Պատճառն այն է, որ այս եղելությունը հնարավոր է նմանեցնել... աստվածաշնչյան Գանիել մարգարեի գրքի հորինվածքներից մեկին, ըստ որի՝ երեք հրեա պատանիների Նաբուգոդոնոսոր թագավորի հրամանով նետում են հնոցը, սակայն նրանք անվնաս ազատվում են իրենց հավատի շնորհիվ<sup>41</sup>: Ահա թե ինչու են հայ եկեղեցական մատենագիրները նախարարներին «նետում եկեղեցին»<sup>42</sup>, ինչպես ինչ-որ բան են նետում հնոցը, և դա ներկայացնում են իբրև առ Աստված գերազանց ու հաստատուն հավատի օրինակ: Բայց եթե Ղևոնդն ու Հովհ. Դրասխանակերտցին ակնարկում են աստվածաշնչական մանուկներին առաքված երկնային գթությունը, որից կարող է բաժին հասնել նաև հայ ժողովրդին, ապա Օրմանյանն այդ մասին շատ ավելի մատչելի լեզվով է գրում: Կարդում ենք. «Պատմագիրներ Բաբելոնի հնոցը նետուած Երեք Մանուկներուն կը նմանցնեն, այդ խուժողով եղելութեան զոհերը, եւ անոնց բերանը կը դնեն Երից Մանկանց օրհնաբանութիւնը... Ըստ այսմ ճշմարիտ հաւատոյ մարտիրոսներ եղած են Նախիջեւանի եւ Խրամի հրկիզեալ նահատակները, ոչ միայն իրենց քրիստոնէութեան պատճառով էր կրածնին, այլեւ հարկաւ, իսլամական սովորութեան համեմատ, ուրացութեան հրաւիրուած են կրակը տալէն առաջ, եւ անոնց մերժելուն վրայ գործադրուած է աղետալից մահուան սպառնալիքը»<sup>43</sup>:

Այս ձևով Հայաստանյայց եկեղեցին ողբերգությունը դարձրեց վկայություն: Ահա թե ինչու են մեր մատենագիրները մարտական այրուձիի 1200 ռազմիկներին ներկայացնում այդքան խեղճ ու անօգնական, զինված միայն ճշմարիտ հավատով: Հերթական անգամ եկեղեցին, սուրբգրային ավանդազրույցների սեփական կրկնօրինակը ստեղծելով, իբր ապացուցում էր, որ Հայոց հողը օրհնյալ է ու սրբազործված: Սակայն, քանի որ վկայաբանությունը երբեք վրիժառության չի կոչում, ապա արաբների գործած եղեռնագործությունն այդպես էլ մնաց անպատասխան...

Ասացինք, որ չի կարելի այս դեպքը հայերի անճարակության օրինակ համարել: Ասենք նաև, որ դա ժամանակի համար ընդհանրապես եզակի դեպք չէր: Եկեղեցու շենքը թշնամու համար ապաստան ու պատսպարան չի համարվել նաև հայերի կողմից: Այդ դեպքում ինչո՞ւ չմտածենք, որ արաբները 703 թ. կրած պարտությունների համար վրեժ լուծելիս կամենում էին գերազանցել թեկուզ Ռշտունիքի Գուկանք գյուղում իրենց հետ կատարվածը: Վարդանակերտի հաղթանակից հետո տեղի ունեցավ այս կռիվը, որտեղ հայերը կրկին փոքրաթիվ էին, սակայն կոտորեցին արաբներին: Ղևոնդը վկայում է. «միայն երկու հարյուր ութսուն մարդ փախուստի դիմելով՝ ընկավ եկեղեցի: Եվ որովհետև [հայերը] չկարողացան որևէ այլ միջոց գտնել, խորհեցին սրբարանը հրկիզել, սակայն Վասպուրականի իշխան Սմբատը. Աշոտ իշխանի որդին, չթողեց այդ բանն անել»<sup>44</sup>: Վերջիվերջո արաբները,

<sup>41</sup> Աստուածաշունչ, Գանիել, Գ:

<sup>42</sup> Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 38:

<sup>43</sup> Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա., Էջմիածին, 2001, էջ 935:

<sup>44</sup> Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 34:

տեսնելով, որ հայերից չեն կարողանում աղերսանքով փրկություն կորզել, դուրս են գալիս եկեղեցուց, որպեսզի պատվով մեռնեն: Հայերը կատարում են իրենց զինվորական պարտքը՝ սրատում են ամենքին, քանզի ոսոխներ էին ու արժանի չէին ողորմածության: Հիշատակություն կա նաև այն մասին, թե ինչպես ապստամբած սասունցիների առաջնորդ Հովհան Խութեցու զինվորներից մեկը աշտեով (կարճ նիզակ) խոցում է Մուշի Ս. Փրկիչ եկեղեցում թաքնված Յուսուֆ ոստիկանին<sup>45</sup>: Դեպքը տեղի է ունեցել 851-852 թթ. ձմռանը<sup>46</sup>:

Հիշարժան մեկ ուրիշ պատմություն. 1208 թ. Արդաբիլի սելջուկ սուլթանը հարձակվում է Անիի վրա, մեծ ավերածություն գործում այնտեղ, իսկ եկեղեցիներում հավաքված մարդկանց սպանում՝ թվով 12.000: Աղետի մասին լուրն Անիի տեր Չաքարե և Իվանե Չաքարյաններին է հասնում վրաց արքունիքում: Նրանք անմիջապես պատասխան արշավանք են ձեռնարկում, գրավում Արդաբիլն ու վրեժխնդիր լինում իրենց անհաշտ հարևանից: Հայ իշխանները, գրում է վրաց անանուն պատմիչը, «սուլթանին և նրա կանանց ու զավակներին գերի վերցրին ու տասն և երկու հազար ընտրյալ մարդիկ սպանեցին մզկիթի մեջ [ճիշտ] այնպես, ինչպես նրանք նույնն արին Անիի եկեղեցիներում... և հաղթող վերադարձան Անի ու հույժ մխիթարվեցին»<sup>47</sup>: Այս դեպքը վրացիները ոչ միայն միշտ հիշատակում, այլև մինչև հիմա ուսուցանում են: Եվ ուսուցանում են ոչ իբրև վկայաբանություն...

Արդաբիլի հաղթությունը XIII դարում հայերն արդեն կատարեցին ի փառս վրաց զենքի, բայց մեր ուշադրության կենտրոնում դեռևս VII-VIII դարերն են, երբ հայոց զենքը գործում էր ի փառս Հայաստանի և նշանակալից հաղթանակներ տանում արաբների նկատմամբ: Հիշենք դրանցից թեկուզ երկուսը: Առաջին. ի պատասխան 701 թվականին Հայաստանում Մուհամմադ գորավարի գործած ավերների ու ջարդերի՝ հայերը, երբ վերջինս գնացել էր Դերբենդը գրավելու, հարձակվում են Դվինում մնացած արաբական զորագնդի վրա և ամենքին կոտորում<sup>48</sup>: Մովսես Կաղանկատվացու երկը X դարում լրացնող հեղինակն է այդ մասին գրում, թե ինչպես «ապստամբած հայերը արաբներին արգելափակում են Դվինում և դրանցից վաթսուներկու հազար կոտորում են՝ Բյուզանդիայից շատ զորքեր բերելով»<sup>49</sup>: Թեկուզ տասն անգամ էլ չափազանցված լինի այս թիվը, միևնույն է, արաբների համար դա ամենամեծ պարտություններից մեկն էր Հայաստանում և ընդհանրապես: Հաջորդը, որ կամենում ենք նշել, Վարդանակերտի նշանավոր ճակատամարտն է (703 թ.): Չկարողանալով արաբների դեմ պայքարի ընդհանուր ճակատ կազմել՝ մի քանի հայ նախարարներ Սմբատ Բագրատունու գլխավորությամբ որոշում են իրենց հեծյալներով անցնել բյուզանդական կողմը: «Նրանք,- պատմում է Գևորգը,- ընթանալով Երասխ

<sup>45</sup> Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, նշվ. աշխ., էջ 191:

<sup>46</sup> Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 434:

<sup>47</sup> **Լ. Մելիքսեթ-Քեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ., Եր., 1936, էջ 23:

<sup>48</sup> Տե՛ս ՀԺՊ, էջ 126:

<sup>49</sup> **Մովսես Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 248:

գետի եզերքով, անցան Ռուսիայի սահմանը ու հասան Ակոռի մեծ ավանը: Իսկ Իսմայելի գորքերը, որոնք Նախճավան քաղաքում էին, ընկան նրանց հետևից և հետապնդելուց չդադարեցին, քանզի հինգ հազարից ավելի էին և կամենում էին կենդանի կլանել նրանց: Երբ հայոց գորքերը տեղեկացան ավարառու թշնամու մասին... անցան Երասխ գետը, բանակ դրեցին Վարդանակերտ ավանում... Առավոտյան... անմիջապես վեր կենալով՝ հարդարեցին գունդ առ գունդ և ճակատ առ ճակատ, ու պատերազմն սկսվեց: Այնտեղ մեծագոր Աստվածն օգնության հասավ հայոց գնդին, և թեպետ երկու հազարից նվազ էին, սակայն շատերին հարվածելով՝ սրի քաշեցին: ...Ովքեր սրից ազատվեցին՝ ընկան Երասխ գետը... սառույցն անմիջապես ջարդվեց, խորասույզ խեղդվեցին բոլոր սրից փախածները և հեղձամահ եղան»<sup>50</sup>: Հինգ հազարից միայն երեք հարյուրը փրկվեց...

Հայաստանում կրած ահա այս և նման ուրիշ պարտությունների դիմ էին հանում արաբները Նախճավանում ու Խրամում: Հնուց եկող օրենքների համաձայն՝ նրանք իրենց պարտքն էին համարում վրեժխնդիր լինել ազգակցի բռնի մահվան համար<sup>51</sup>: Իսկ քանի որ ռազմի դաշտում կրած պարտությունից հետո սովորաբար կոտորած է տեղի ունենում, ապա դա նրանք նույնպես բռնի մահ էին համարում և իրենց իրավունք էին վերապահում վրեժխնդիր լինել ցանկացած եղանակով, մինչև անգամ խաբեությամբ ու նենգությամբ:

Մրանք բոլորը հանրահայտ փաստեր են: Սակայն պատմական երևույթներն ու իրադարձությունները նորովի լուսաբանելու համար, կարծում ենք, այսօր պարտադիր է ոչ այնքան նորահայտ փաստեր հրապարակելը (դրանք պարզապես կարող են և չլինել այլևս), որքան անցյալը հնարավորինս անաչառ կերպով վերարժեքավորելու անհրաժեշտությամբ առաջնորդվելը:

**Г. К. ДАВТЯН — Несколько замечаний относительно арабских нашествий в Армению.** — Армяно-арабские военно-политические отношения VII-VIII вв.- яркие и содержательные страницы истории средневековой Армении. Довольно богатую информацию об этом периоде содержат как армянские, так и иностранные источники. Значительно число и таких трудов, в которых всесторонне рассмотрен материал, имеющий отношение к предмету настоящей статьи.

Обращаясь к нескольким эпизодам арабских походов в Армению, автор статьи предпринимает попытку дополнить их традиционное рассмотрение и оценки. Внимание уделяется, в частности, побудительным причинам захвата Двина в 640 году, сожжению заживо армянских нахараров в церквях Нахичевана и Храма в 705 г., позитивному и отрицательному влиянию арабского господства на армянскую действительность.

<sup>50</sup> Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 32-33:

<sup>51</sup> Տե՛ս «История религий», т. I, М., 1992, էջ 350: